ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային պետական

քոլեջի կառավարման խորհրդի նախագահ

27 օգոստոսի 2021 թվական

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԿՈՒՐՍՂԵԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀՐԱԶԴԱՆ 2021

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԿՏՊՔ-ի կուրսղեկական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:

1.2. Կուրսղեկական խորհրդի կանոնակարգը քննարկում և հաստատում է քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. Կուրսղեկական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

2. ԿՈՒՐՍՂԵԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1. Կուրսղեկական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ԿՏՊՔ-ի դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, ով ի պաշտոնե կուրսղեկական խորհրդի նախագահն է: Կուրսղեկական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 1-ը ըստ ձևավորված խմբերի կուրսղեկների քանակի: Կուրսղեկական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատում է քոլեջի տնօրենի հրամանով:

2.2.ԿՏՊՔ-ի կուրսղեկական խորհուրդը քոլեջում կոլեկտիվ ղեկավարման մարմին է , որը կոչված է նպաստելու ԿՏՊՔ-ում տարվող ուսումնական, կազմակերպչական, դաստիարակչական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

2.2. Կուրսղեկական խորհրդի կազմում ընդգրկվում են բոլոր կուրսղեկները և արտադրական ուսուցման վարպետները: Կուրսղեկական խորհրդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք պետք է լինեն կիսամյակի ընթացքում առնվազն 3 անգամ:

2.3. Կուրսղեկական խորհուրդը իր կազմից բաց քվեարկությամբ ընտրում է խորհրդի քարտուղար, ով պատասխանատու է նիստերի կազմակերպման, նախագահի հետ օրակարգի մշակման և նիստերը արձանագրելու համար:

3.ԿՈՒՐՍՂԵԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1.Կուրսղեկական խորհուրդը՝

- Քննարկում և հաստատում է կուրսղեկների տարեկան աշխատանքային պլանները՝ ըստ կիսամյակների

- Քննարկում, գնահատում և հավանության է արժանացնում կուրսղեկների կիսամյակային հաշվետվությունները
- Ուսումնական տարվա սկզբին իրականացնում է լսարանների բաշխում և սահմանում է պատասխանատվության չափը նյութատեխնիկական բազայի պահպանության համար
- Քննարկում է քոլեջի գույքի պահպանման հետ կապված խնդիրները
- Քննարկում է կուրսղեկների կողմից ներկայացված ուսանողների ամսական հաճախումների հաշվետվությունները և ըստ «Ուսանողների կարգապահական կանոններ»-ի դրույթների բացակայությունների թույլատրելի սահմանն անցած ուսանողներին ներկայացնում կարգապահական տույժի ենթարկման
- Հաստատում է կուրսղեկի ժամերի իրականացման պարբերականությունը՝ 2 շաբաթ մեկ անգամ
- Հաստատում է կուրսղեկի ժամի թեմաները
- Որոշում է կիսամյակի ընթացքում համաքոլեջային միջոցառումների կազմակերպման պատասխանատուներին
- Սահմանում է քոլեջի առանձին խմբերի էքսկուրսիաներ կազմակերպելու կարգը
- Որոշում է համաքոլեջային էքսկուրսիաների կազմակերպման ուղղությունները պատասխանատուներին
- Քայլեր է ձեռնարկում անհարգելի բացակայությունների թիվը կրճատելու ուղղությամբ
- Քայլեր է ձեռնարկում չառաջադիմող ուսանողներին աջակցություն ցուցաբերելու նպատակով
- Սահմանում է բացակայությունները հարգելի համարելու ներքին մոտեցումներ(ուսանողների բացթողման թերթիկ, բուժքրոջ թույլտվություն, բժշկ տեղեկանք)
- Բացահայտում է համապատասխան կուրսերում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներին և կանոնակարգում է կուրսղեկների կողմից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների հետ տարվող աշխատանքները
- Բացահայտում է համապատասխան կուրսերում հակահիրավական և կարգազանց վարք դրսևորած ուսանողներին , կանոնակարգում է հակահիրավական և կարգազանց վարք դրսևորած ուսանողների հետ տարվող աշխատանքները

- Քննարկում և որոշում է կայացնում կուրսղեկական և քոլեջում իրականաց դաստիարակչական աշխատանքների մասով՝ որակի ապահովման կենտրոնի կող իրականացրած սոցիալական հարցումների հետ կապված
- Քննարկում և որոշում է կայացնում քոլեջի «Առաջարկությունների և բողոքնե արկղում կուրսղեկների աշխատանքին վերաբերվող առաջարկների ու բողոքն վերաբերյալ
- Համագործակցում է քոլեջի ստորաբաժանումների և այլ ուսումնաօժանդ աշխատակիցների հետ(կարիերայի կենտրոն, ուսումնական մաս, բուժքո մանկավարժ-հոգեբան, հասարակայնության հետ կապերի պատասխանատու հաշվապահություն, կադրերի բաժին և այլն)
- Համագործակցում է պետական, միջազգային և հասարակական կառույցների հե համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով
- Աջակցում է հանրապետական , մարզային, համաքաղաքային, սպորտայի մշակութային միջոցառումների կազմակերպմանը
- Մշակում և իրականացնում է կուրսղեկների պարգևատրման գործընթացը
- Սահմանում է «Լավագույն կուրս» և «Լավագույն կուրսղեկ» մրցանակաբաշխությա կանոնները
- Որոշում է «Լավագույն կուրս» և «Լավագույն կուրսղեկ» մրցանակաբաշխությա հաղթողին
- Քննարկում է քոլեջում կարգապահական և վարքի կանոնները խախտելու համար կարգապահական տույժի ենթարկված ուսանողների հետ տարվող աշխատանքները
- Քննարկում է կուրսղեկների կողմից իրենց խմբերում իրականացրած դասալսումները
- Հետևում է ուսման վճարների հավաքագրման աշխատանքներին
- Քննարկում է ծնողների հետ իրականացվող աշխատանքները

գայքի գարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն՝ *Գ. Գևորգյան*